# ՀԻՇԱՏԱԿԻ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ



*Արցախյան 44-օրյա պատերազմի տարելիցի կապակցությամբ սեպտեմբերի 27-ին ԱրՊՀ-ում տեղի են ունեցել հիշատակի և խոնարհումի արարողություններ: Ուսանողներն ու դասախոսները ծաղիկներ են խոնարհել՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմում անմահացած ԱրՊՀ ուսանողների: Ժամը 11-ին լռության րոպե էր համալսարանում, որի ընթացքում համալսարանականները հոտնկայս հարգել են պատերազմի նահատակների հիշատակը:*

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված 44-օրյա պատերազմում հավերժի ճամփորդ դարձած ԱրՊՀ ուսանողների և շրջանավարտների հիշատակին: Հուշ-ցերեկույթին ներկա էին նաև անմահացած հերոսների հարազատներ, դասախոսներ, ուսանողներ:

Միջոցառման նախաձեռնող, իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ. Տաթևիկ Գևորգյանի խոսքով՝ հուշ-ցերեկույթը առիթ էր՝ մեկ անգամ ևս խոնարհվելու պատերազմում հավերժի ճամփորդ դարձած իրավաբան ուսանողների ու շրջանավարտների հիշատակի առջև և արժևորելու նրանց սխրանքը:

«Նրանց սխրանքը պարտավորեցնում է, որպեսզի ապրողներս մեծ պատասխանատվությամբ կատարենք մեր աշխատանքը: Խոնարհվում ենք մեր անմահացած հերոսների հիշատակի առջև: Արցախը հայկական է, և մեր հերոսների շնորհիվ պատերազմից հետո ապրում է Ացախը»,-նշել է Տ. Գևորգյանը՝



հնչեցնելով նաև պատերազմից վերադարձած տղա ուսանողների անունները և շնորհակալություն հայտնելով ապրող հերոսներին անուն առ անուն:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանն իր խոսքում կարևորել է գիտության և տեխնոլոգիական զարգացման դերը հետագա հաղթանակների համար՝ երախտագիտության ու խոնարհումի խոսք հղելով զոհված հերոսների հիշատակին ու նրանց հարազատներին:

«Խոնարհվում ենք ձեր առջև, հերոսածին մայրեր, ձեր որդիներին բացակա չենք դնի, նրանք միշտ մեզ հետ են, մեր սրտերում»,-իր ելույթում ընդգծել է պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը՝ շնորհակալություն հայտնելով նաև միջոցառման կազմակերպիչներին:

Ի.գ.թ., դոցենտ Ռիտա Առուստամյանն իր խոսքում նշել է, որ ցավ ու հպարտություն է պարուրում տղաների մասին խոսելիս:

«Ցավ, որովհետև տղաները ֆիզիկապես մեզ հետ չեն, և հպարտություն, որ պատիվ եմ ունեցել դասավանդելու այնպիսի հերոսների, ինչպիսիք են մեր տղաները: Մենք չենք պարտվել, որովհետև նրանց շնորհիվ Արցախը ապրում է հայկական»,-նշել է նա:

Միջոցառմանը ուսանողները հանդես են եկել գեղարվեստական կատարումներով՝ նվիրված հայրենիքին ու մեր հերոսներին:



«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ

*Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ*

Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զ. Սառաջյան

Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5: Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:

Այցելի՛ր asu.am կայք:

www.asu.am

# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 06(234) սեպտեմբեր - 2021

# ԱրՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ



*Սիրելի՛ ուսանողներ և գործընկերներ,*

*ԱրՊՀ մտնող յուրաքանչյուր ոք առաջին հերթին տեսնում է անցած ուսումնական տարում ունեցած մեր անասելի ծանր կորուստներն ամփոփող հուշատախտակը, որտեղից յուրաքանչյուրին անխոս, կիսատ մնացած կյանքով իմաստնացած հայացքներով իրենց պատգամն են հղում մեր 24 անմահացած ուսանողների լուսանկարները: Ուսանողներ, ովքեր պիտի շարունակեին իրենց ուսումը բուհում, բայց հայրենիքի պաշտպանությունը վեր դասեցին ամեն ինչից՝ դառնալով հավերժի ճամփորդներ: Մեր նահատակված տղաներին հավերժ փառք ու պատիվ:*

*Նրանց չապրած կյանքն ու անօրինակ սխրանքը պատգամում են յուրաքանչյուր ապրողի էլ ավելի մեծ պատասխանատվությամբ լծվել իրեն բաժին հասած աշխատանքին ու առաքելությանը, ուսանողին՝ սովորել, դասախոսին՝ սովորեցնել՝ միասին ապրելով մեր հայրենիքում ու ապրեցնելով Արցախի Հանրապետությունը:*

*Միայն համառ աշխատանքով, մեծ նպատակասլացությամբ, անկոտրում կամքով ու համախմբվածությամբ կարող ենք հաղթահարել մեզ բոլորիս բաժին ընկած դժվարությունները և ուղղել պատերազմից կորացած մեջքը:*

*Անցած ուսումնական տարում, պատերազմի թարմ վերքերը դեռ չհաղթահարած, մենք միասին կարողացանք լծվել ուսումնական գործընթացին և ԱրՊՀ-ում պարապմունքների վերսկսումով ցույց տվեցինք Արցախում ապրելու, արարելու մեր անսակարկ կամքը: Անցնելով 44-օրյա պատերազմի միջով՝ ԱրՊՀ-ն երբեք չնահանջեց իր դիրքից ու խրամատից՝ տղաները՝ առաջնագծում, աղջիկները՝ թիկունքային աշխատանքներում: Կրթության բնագավառը ևս մի յուրահատուկ դիրք է, որը պետք է ամուր պահել՝ զինվելով որակյալ, ժամանակի պահանջներին համահունչ, մրցունակ գիտելիքներով: Արցախի պետական համալսարանը բոլոր ժամանակներում արել է և կանի հնարավորը՝ ուսանողներին ոչ միայն որակյալ գիտելիքներ տալու, այլ նաև նրանց մեջ ձևավորելու ազգային ու համամարդկային արժեքներ, որոնք կդարձնեն մեր ուսանողներին վաղվա մեր լավագույն մասնագետները՝ յուրաքանչյուրն իր բնագավառում:*

*Սիրելի՛ համալսարանականներ, ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի և դպրության օրվա առթիվ: Այսօրը տոն է բոլոր նրանց համար, ովքեր իրապես արժևորում են գիտելիքը և իրենց ամեն մի օրը ծառայեցնում գիտելիքների անսահման աշխարհում առաջ շարժվելուն:*

*Առանձնահատուկ շնորհավորում եմ առաջին կուրսեցիներին, ովքեր կատարել են արդեն իրենց կյանքի ամենակարևոր քայլերից մեկը՝ ընտրելով Արցախի մայր բուհը:*

*Մաղթում եմ բոլորիդ արդյունավետ օգտագործել ձեզ ընձեռված ժամանակն ու հնարավորությունները՝ այդ ամենը ծառայեցնելով գիտելիք ամբարելու անսպառ գործընթացին:*

*Խաղաղություն մեր երկրին: Առողջ եղեք և գիտելիք ստանալը դարձրեք նպատակ:*

# ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԴԱՍ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ

*Մայր բուհում նոր ուսումնական տարին մեկնարկեց Արցախի Հանրապետության հռչակման և Գիտելիքի ու դպրության օրվան նվիրված անկախության դասով, որը վարել են ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը և ՊԲ հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, գնդապետ Նորայր Մկրտչյանը:*



Անկախության դասը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ հարգելով պատերազմի հետևանքով հավերժի ճամփորդ դարձած տղաների հիշատակը:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհավորել է ուսանողներին ու դասախոսներին՝ Գիտելիքի ու դպրության օրվա առթիվ՝ նշելով, որ այսուհետ բոլոր միջոցառումները պետք է սկսել՝ խնկարկելով պատերազմի նահատակ դարձած մեր լույս տղաների հիշատակը:

«Նրանց չապրած կյանքն ու անօրինակ սխրանքը պատգամում են յուրաքանչյուր ապրողի էլ ավելի մեծ պատասխանատվությամբ լծվել իրեն բաժին հասած առաքելությանը, ուսանողին՝ սովորել, դասախոսին՝ սովորեցնել՝ միասին ապրելով մեր հայրենիքում ու ապրեցնելով Արցախի Հանրապետությունը: Միայն համառ աշխատանքով, մեծ նպատակասլացությամբ, անկոտրում կամքով ու համախմբվածությամբ կարող ենք հաղթահարել մեզ բոլորիս բաժին ընկած դժվարությունները և ուղղենք պատերազմից կորացած մեջքը»,-նշել է Ա. Սարգսյանը:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, շնորհավորելով անկախության հռչակման և գիտելիքի ու դպրության տոների առթիվ, ընդգծել է, որ ԱՀ ԿԳՄՍ-ն պատրաստ է իրականություն դարձնել սովորողների կրթական երազանքները:

«Արցախում կշարունակվի ստեղծվել ժամանակին համահունչ գիտելիք: Արցախը ունի այդ ներուժը: Վկայությունը՝ բնագիտական միջազգային օլիմպիադայում այս տարվա մեր նվաճումն է: Պատմական հենց այս ժամանակահատվածում է, որ կրթական համակարգը պետք է խիզախի ու նվաճի: Պետականությունը ձեռք է բերվում շատ թանկ գնով: 30 տարի առաջ մենք ունեցանք պատմության փառավոր էջեր՝ հայկական զույգ պետություն: Համոզված եմ՝ մենք միասին կհաղթահարենք նաև մեր հարատևման այս փորձությունը և կշարունակենք գրել հիշատակության արժանի հայ հերոս զինվորի սխրանքների մասին»,-նշել է նախարար Ղարախանյանը՝ հավելելով, որ մեր պատմությունը այսուհետ պետք է գրվի այնպես, ինչպես մեր լույս տղաներն են իրենց սխրանքով պատգամում:



ՊԲ հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, գնդապետ Նորայր Մկրտչյանը, շնորհավորելով համալսարանականներին, անդրադարձել է ԼՂՀ անկախության հռչակման պատմական նախադրյալներին, որոնք 30 տարի առաջ հայ ժողովրդի առջև դրել էին լինել-չլինելու խնդիր, և անկախության հռչակումը հրամայական էր դարձել:

«Այդ լինել-չլինելու խնդիրը հայ ժողովրդի առջև դրվեց նաև 2020 թ. սեպտեմբերի 27-ին: Մեր տղաներն անօրինակ սխրանքներով ու հերոսական դրվագներով ցույց տվեցին մինչև վերջ կանգնելու ու պայքարելու հայ ժողովրդի անկոտրում կամքը: Արցախյան բոլոր պատերազմների ընթացքում մեր հերոս տղաների, նվիրյալների շնորհիվ այսօր ունենք Արցախի Հանրապետություն: Արցախի անկախությունը հայ ժողովրդի գոյության բանալին է»,-նշել է Նորայր Մկրտչյանը՝ հավելելով, որ անկախությունը բացարձակ արժեք է, և որի պահպանման ու ամրապնդման համար առանցքային դեր ունի գիտելիքներով զինված քաղաքացին:

Համալսարանականներին շնորհավորել են նաև «Արցախի պահեստազորի սպաների միություն» ՀԿ ներկայացուցիչները:



# ԿԱՅԱՑԵԼ Է «ՀՆՉՈՂ ՁԱՅՆԵՐ» և «ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴՈՒՌԸ» ԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ



*Սեպտեմբերի 28-ին Համազգային հայ կրթական, մշակութային միության Արցախի գրասենյակի ու Արցախի պետական համալսարանի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել է «Հնչող ձայներ» և «Պատերազմի դուռը» գրքերի շնորհանդեսը: Միջոցառմանը ներկա են եղել ՀՀԿՄՄ երևանյան գրասենյակի տնօրեն Ռուզաննա Առաքելյանը, Համազգայինի Արցախի գրասենյակի ներկայացուցիչ Հերմինե Ավագյանը, «Պատերազմի դուռը» գրքի հեղինակ Վիտալի Պետրոսյանը, ԱրՊՀ դասախոսներ, հյուրեր և ուսանողներ:*

«Հնչող ձայներ» գրքում ընդգրկված են 44-օրյա պատերազմում զոհված Վարդան Ամալյանի, Արտակ Բարսեղյանի, Շիրակ Գասպարյանի, Ավետիք Կարճիկյանի, Տիգրան Հարությունյանի, Արեն Հովհաննիսյանի, Վաչագան Մանուկյանի, Սուրեն Մելիքբեկյանի, Շանթ Նավոյանի, Հայասեր Հովսեփյանի և Արցախյան առաջին ազատամարտում զոհված արցախցի բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանի ստեղծագործությունները: Գիրքը հրատարակվել է Համազգային հայ կրթական և մշակութային միության երևանյան գրասենյակի նախաձեռնությամբ:

Վիտալի Պետրոսյանի «Պատերազմի դուռը» գրքում հայրենի Հադրութի կորուստն է և լքված տունը: Գիրքը տպագրվել է Համազգայինի Արցախի գրասենյակի կողմից:

Միջոցառումը մեկնարկել է Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած ԱրՊՀ ուսանողների հիշատակը հավերժացնող հուշատախտակին ծաղիկներ խոնարհելով, որից հետո միջոցառմանը բացման խոսքով հանդես է եկել Հերմինե Ավագյանը:

Շնորհակալություն հայտնելով ներկաներին և կազմակերպիչներին՝ Հ. Ավագյանը ներկայացրել է երկու գրքերի բովանդակությունը և լույս ընծայման պատմությունը:

«Կարծում եմ, որ «Հնչող ձայներ»-ը այն տղաների ձայներն են՝ իրենց ստեղծագործությունների, պատմվածքների տեսքով, որ պետք է հավերժ հնչեն մեր բոլորի մտքում, հոգում և սրտում: Պետք է սերունդներին փոխանցվի այդ ձայնը, որը բոլորիս համար առաջին հերթին պետք է լինի սթափության ձայն, ներկայից, անցյալից դասեր քաղելու և ճիշտ ապրելու ձայն»,- իր խոսքում նշել է Հ. Ավագյանը:

ՀՀԿՄՄ երևանյան գրասենյակի տնօրեն Ռուզան Առաքելյանի խոսքով՝ «Հնչող ձայներ» գրքի հրատարակման գաղափարը ծնվել էր պատերազմի օրերին:

«Ինձ համար ավելի մեծ երջանկություն չէր կարող լինել, քան այսօր ներկա գտնվել Արցախում: Երկու տարբեր զգացումներ են ներսումս իրար խառնվել. ցավ՝ հայրենիքի կորուստ, երիտասարդ սերնդի ֆիզիկական բացակայություն, և հպարտություն, որ Արցախը կա և շարունակում է ապրել»,- նշել է Ռ. Առաքելյանը՝ հավելելով, որ հայրենիքը սիրելի է իր պատմությամբ, մշակույթով, գրականությամբ ու նաև հերոսական այն տղաների թափած արյունով, որոնք սրբացրել են մեր հողը:

Գրքերն արժևորող ելույթներով հանդես են եկել գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Նոնա Դավթյանը, բ.գ.թ., դոցենտ Սիլվա Մինասյանը, բ.գ.թ., դոցենտ Զարինե Սառաջյանը, բ.գ.թ. Տաթև Սողոմոնյանը:

«Պատերազմի դուռը» գրքի հեղինակ Վ. Պետրոսյանը շնորհակալություն է հայտնել շնորհանդեսի կազմակերպման և գրքի տպագրությանը աջակցելու համար:

Միջոցառման ընթացքում գրքերից ասմունքներով հանդես են եկել նաև ԱրՊՀ ուսանողները:

Վերջում Համազգային հայ կրթական, մշակութային միությունը հրատարակված գրքերից նվիրել է ԱրՊՀ գրադարանին ու ներկաներին:

# «ԱՐՑԱԽՆ ԱՊՐՈՒՄ Է» ԽՈՐԱԳՐՈՎ ՋԱՀԵՐԹ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՔԱՋՈՐԴԻՆԵՐԻ




*Սեպտեմբերի 26-ին Ստեփանակերտում կայացել է «Արցախն ապրում է» խորագրով ջահերթ՝ ի հիշատակ արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված քաջորդիների:*

Ջահերթին մասնակցել են ԱրՊՀ հարյուրավոր ուսանողներ եւ դասախոսներ:

Նախքան երթի մեկնարկը՝ Սբ. Հակոբ եկեղեցում տեղի է ունեցել հոգեհանգստի կարգ:

Եկեղեցու բակում ԱրՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Արա Սարգսյանը երիտասարդության անունից հանդես է եկել ելույթով, որը Արցախի հայկականության, արցախցու՝ իր հողին ամուր կառչած լինելը, Արցախում ապրելու ու արարելու հայ ժողովրդի անսասան կամքը փաստող ուղերձներ էր պարունակում:

«Արցախն ապրում է:

Արցախում հայն է ապրում:

Արցախը հայկական է»,- ելույթի այս տողերը մասնակիցները հնչեցրել են միասին:

Այնուհետև մասնակիցները ջահերով շարժվել են դեպի Ստեփանակերտի հուշահամալիր՝ իրենց հետ տանելով Արցախի Հանրապետության դրոշը: Երթին են միացել «Հայաստան», «Սփյուռք», «Հադրութ», «Շուշի», «Քաշաթաղ», «Շահումյան», «Քարվաճառ» թևերը:

Երթն ամփոփվել է Ստեփանակերտի հուշահամալիրում, որտեղ մասնակիցներին դիմավորել են քահանան, զինվորը և հղի կինը, ովքեր խորհրդանշում են հավատը, ուժը և կյանքը:

# ԱրՊՀ ՌԵԿՏՈՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՊՏՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

*Սեպտեմբերի 28-ին ԱրՊՀ ռեկտորն ընդունել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պատվիրակությանը, որի կազմում էին ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տ.գ.դ. Թաթուլ Մկրտչյանը եւ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Հախվերդյանը:*



Քննարկվել են երկու բուհերի համագործակցությանը, համատեղ ծրագրերի եւ «Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման տեսլականը» գիտահետազոտական համատեղ ծրագրի իրականացմանը վերաբերող հարցեր:

Ռեկտորը շնորհակալություն է հայտնել ՀՊՏՀ պատվիրակությանը՝ ԱրՊՀ այցելելու եւ համագործակցելու համար:

Հանդիպմանը մասնակցում էին նաեւ ԱրՊՀ գիտության գծով պրոռեկտոր, պ.գ.դ. Վալերի Ավանեսյանը եւ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ, դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը:



# ԱրՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

*Սեպտեմբերի 23-ին կայացել է Արցախի պետական համալսարանի 2021-2022 ուստարվա թվով 340 առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, համալսարանի ղեկավար կազմը, ուսանողներ և հյուրեր:*



Երդման արարողությունը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ Արցախյան բոլոր պատերազմներում նահատակված հերոս տղաների:

ԱրՊՀ ռեկտոր Ա. Սարգսյանը, ողջունելով առաջին կուրսեցիներին, շնորհավորել է նրանց բուհ ընդունվելու կապակցությամբ՝ նշելով.

«Շատ դժվար ժամանակներ ենք ապրում, բայց պետք է լավատեսությամբ նայենք առաջ: Մաղթում եմ, որպեսզի Ձեզ ընձեռված ժամանակը օգտագործեք լավագույնս արդյունավետ՝ գիտելիք ստանալն ու զարգանալը դարձնելով գերնպատակ»:

Երդման տեքստն ընթերցելու պատիվն այս տարի վերապահված էր տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Մարիամ Վարդանյանին, ով իր և բոլոր առաջին կուրսեցիների անունից երդվեց «վառ պահել նահատակված ուսանողների հիշատակը, հավատարիմ մնալ նրանց վեհ ու անմահ գաղափարներին, պատվով ու պատասխանատվությամբ շարունակել նրանց կիսատ թողած գործը և սրբությամբ պահպանել հայրենի երկրի զարգացման ու բարգավաճման ուղին բռնած մայր բուհը»:

Ուսանողներին ողջույնի և շնորհավորանքի խոսք է հղել նաև ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վ.Յարամիշյանը. «Դուք երդվեցիք բարձր պահել ուսումնառության և ակտիվության դրոշը: Ցավոք, մեզ հետ այդ նույնը կարող էին երդվել մեր հերոս տղաները: Եկեք այսօր հնչեցրած երդումը պահենք մեր հոգում և հավատանք, որ ամեն ինչ դեռ առջևում է՝ մեր հաջողությունները, մեր ձեռքբերումները, մեր համալսարանի պատիվը և Ձեր լուսավոր ապագան»,- իր խոսքում նշել է Վ.Յարամիշյանը՝ հավելելով, որ առաջադիմության, ակտիվության, համախմբվածության և կազմակերպվածության շնորհիվ կհասնենք մեր առջև դրված բոլոր նպատակներին:

Առաջին կուրսեցիներին շնորհավորանքի խոսք է հղել նաև 2020-2021 ուս. տարվա շրջանավարտ Ինեսսա Առուստամյանը, ով շնորհակալություն է հայտնել ԱրՊՀ դասախոսական կազմին՝ ուսումնառության տարիներին անհրաժեշտ գիտելիքներ և փորձ ստանալու համար:

Ընդունելության արդյունքներով ամենաբարձր միավորներ վաստակած առաջին կուրսեցիներն ուսանողական տոմսերն ու ստուգման գրքույկները ստացել են ԱրՊՀ ռեկտոր Ա.Սարգսյանի, պրոռեկտորներ Վ.Յարամիշյանի և Գ.Սահակյանի կողմից:

# ԱրՊՀ ՌԵԿՏՈՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԲԵՌԼԻՆԻ ԱԶԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍ ԺԻՐԱՅՐ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ



*ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը սեպտեմբերի 24-ին ընդունել է հայ հասարակական-քաղաքական գործիչ, աշխարհագետ, քարտեզագետ, բանասեր, գերմանաբնակ մտավորական, Բեռլինի ազատ համալսարանի դասախոս, դոկտոր Ժիրայր Քոչարյանին: Հանդիպմանը մասնակցում էր նաև ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը:*

Ողջունելով Ժ. Քոչարյանին՝ ԱրՊՀ ռեկտորը շնորհակալություն է հայտնել նրան՝ Արցախի պետական համալսարան այցելելու համար և կարևորել նրա հայանպաստ գործունեությունը գիտության բնագավառում:

Հանդիպմանը քննարկվել են բանասիրության, բարձրագույն կրթության արդիական խնդիրներին, եվրոպական բուհերի հետ համագործակցության հեռանկարներին վերաբերող հարցեր:

# ԱրՊՀ Է ԱՅՑԵԼԵԼ ՂՐԻՄԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ ՕԼԵԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ



*Արցախի Հանրապետության և Հայաստանի (երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի շրջանակներում սեպտեմբերի 22-ին Արցախի պետական համալսարան է այցելել Ղրիմի դաշնային համալսարանի պրոֆեսոր, փ.գ.դ., փիլիսոփայության ֆակուլտետի դեկան Օլեգ Գաբրիելյանը և ԱրՊՀ ուսանողության համար հանդես եկել դասախոսությամբ:*

Նախքան դասախոսության մեկնարկը՝ պրոֆեսոր Օլեգ Գաբրիելյանը հանդիպել է ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանի հետ: Հանդիպմանը, որին ներկա էր նաև ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, քննարկվել են կրթությանն ու գիտությանը վերաբերող, հետագա համագործակցությունն ուղենշող հարցեր: Ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Օլեգ Գաբրիելյանին՝ ԱրՊՀ այցելելու համար՝ կարևորելով սփյուռքահայության դերն ու ներդրումը հայրենիքի զարգացման գործում: Իր հերթին Օլեգ Գաբրիելյանը պատրաստակամություն է հայտնել ԱրՊՀ-ին ուսումնամեթոդական աջակցություն ցուցաբերելու գործում՝ կարևորելով Սփյուռքի կենսունակության պահպանման հարցում հայրենիքի հետ մշտական կապի մեջ գտնվելը:

Պրոֆեսոր Օլեգ Գաբրիելյանը ԱրՊՀ պատմության և իրավագիտության, ինչպես նաև բանասիրական ֆակուլտետի ուսանողության համար հանդես է եկել բարձրագույն կրթության զարգացման միտումներին վերաբերող թեմայով դասախոսությամբ, որի ընթացքում նա անդրադարձել է բարձրագույն կրթության արդիական խնդիրներին, կրթության հետ կապված հումանիտար-սոցիալական, ինժեներական, ՏՏ ոլորտներին, տեղեկատվական պատերազմներին:

Խոսելով տեխնոլոգիական առաջընթացին համաքայլ կրթություն ունենալու անհրաժեշտությունից՝ նա կարևորել է երիտասարդության ներուժը՝ ընդգծելով այն հանգամանքը, որ երիտասարդ սերունդն աչքի է ընկնում տեղեկատվական տեխնոլոգիաներից հմտորեն օգտվելու կարողություններով, իսկ ավագ սերունդը՝ գիտելիքով ու փորձով:

«Շատ կարևոր է երիտասարդ և ավագ սերունդների ունեցած առավելությունների համադրումը արդյունավետության հասնելու համար»,-նշել է Օլեգ Գաբրիելյանը:





# ԿԱՅԱՑԵԼ Է ԱրՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

*Սեպտեմբերի 30-ին տեղի է ունեցել ԱրՊՀ գիտխորհրդի նիստ, որին մասնակցում էր նաև ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը: Քննարկվել և հաստատվել են ուսումնական գործընթացին վերաբերող մի շարք հարցեր:*



ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով նիստի մասնակիցներին, տեղեկացրել է, որ ԱրՊՀ գիտխորհրդի երաշխավորությամբ լույս է տեսել «Լեռնային Ղարաբաղի էթնոգրաֆիա» («Этнография Нагорного Карабаха») ռուսալեզու գիրքը՝ նվիրված Արցախում տեղակայված ՌԴ խաղաղապահ զորակազմին: Ռեկտոր Արմեն Սարգսյանը գրքի մեկ օրինակ նվիրեց ԱՀ ԿԳՄՍ նախարար Լ. Ղարախանյանին: Նիստի օրակարգի առաջին հարցով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը, ֆակուլտետների դեկանները և ՈԱԿ վարիչը ներկայացրել են տեղեկատվություն ուսումնական գործընթացի ընթացքի մասին: Համաձայն տեղեկատվության՝ ուսումնական գործընթացն ընթանում է բնականոն հունով, հաստատված են դասացուցակները, դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունները, բոլոր կրթական ծրագրերով հիմնականում առկա են դասախոսությունների փաթեթները, դասընթացների առարկայական նկարագրերը, լսարանների բաշխման հարցը լուծված է, կատարվում է ուսումնական գործընթացի ամենօրյա վերահսկողություն, հաճախումների մշտադիտարկում, դասատապալումներ հիմնականում չեն արձանագրվել:Գիտխորհուրդը հաստատել է նաև ռեկտորատի առաջարկությունը՝ փ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանին և լեզվաբան, արևելագետ, իրանագետ, հասարակական գործիչ, բ.գ. թ., պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանին ԱրՊՀ «Պատվավոր դոկտոր»-ի կոչում, իսկ մ.գ.դ., պրոֆեսոր Ալեքսանդր Խաչատրյանին՝ ԱրՊՀ «Ոսկե մեդալ» շնորհելու մասին հարցը:

2021-2022 ուսումնական տարվա առաջին ընթացիկ ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին տեղեկատվությամբ հանդես է եկել պրոռեկտոր Սահակյանը: Գիտխորհուրդը հաջորդիվ լսել է 2020-2021 ուսումնական տարվա հաշվետվությունների կազմակերպման և ՀՀ պետական բուհերի հետ համագործակցության պայմանագրերի կնքման մասին հարցերը:

# ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ



*Սեպտեմբերի 22-ին ԱրՊՀ և ԱՀ ՊԲ համատեղությամբ Պաշտպանության բանակի նիստերի դահլիճում տեղի է ունեցել գիտագործնական կոնֆերանս՝ նվիրված ինքնասպանությունների կանխարգելման համաշխարհային օրվան:*

«Ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու երևույթի պատճառները, նպաստող պայմանները և կանխարգելման ուղիները» թեմայով գիտագործնական կոնֆերանսին մասնակցում էին զորամասերի, գումարտակների հրամանատարների ԲՀԱ գծով տեղակալներ, սպա-հոգեբաններ, ռազմաիրավապահ մարմինների ներկայացուցիչներ, ԱրՊՀ դասախոսներ, հոգեբանական կենտրոնի աշխատակիցներ և ուսանողներ: